ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«21» նոյեմբերի 2016 թվականի N: 439-Ա ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ N7 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի N128-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 53-րդ և 54-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 4-րդ կետի 1-ին ենթակետի, 5-րդ, 13-րդ, 15-րդ, 17-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2016 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 01/07.1/14050-16 գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N7 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) անդամ՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված Լուսինե Խաչատրյանի լիազորությունները և նրա փոխարեն Խորհրդի կազմում 3 տարի ժամկետով հաստատել Գևորգ Սիմոնյանին:

2. Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի մայիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N7 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի N51-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N128-Ա որոշման հավելվածում «Խաչատրյան Լուսինե» բառերը փոխարինել «Սիմոնյան Գևորգ» բառերով:

Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝